

ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 3

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Իրական արդարությունը	Ամեն բան Քրիստոսի համար	Չգուշացում	Իրական արդարությունը	Քրիստոնեական փրկության ճշմարիտ ճանապարհը
3:1-11	3:1-11	3:1բ 3:2-4ա 3:4բ-6 3:7-11	3:1-11	3:1բ-16
Նկրտելով դեպի նպատակակետ	Նկրտելով դեպի նպատակը	Խոստովանություն և հորդորներ	Վազելով դեպի նպատակը	
3:12-16	3:12-16	3:12-16	3:12-14 3:15-16	
	Մեր քաղաքացիությունը երկնքից է			
3:17-4:1	3:17-4:1	3:17-4:1	3:17-21	3:17-4:1

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻՎԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 3:1

1Վերջապես, իմ եղբայրներ, ուրախ եղե՛ք Տիրոջով. նույն բաները ձեզ գրելը ինձ համար ձանձրալի չէ, իսկ ձեզ համար ապահովություն է:

3:1 «Վերջապես» Բառացի սա նշանակում է «մնացածի համար» (*loipon*): Պողոսը հաճախ էր օգտագործում այս տերմինը, որով անցում էր կատարում հաջորդ թեմային, սովորաբար նամակի ավարտին (տես՝ 2 Կորնթ. 13:11, Եփես. 6:10, 1 Թեսաղ. 4:8, 2 Թեսաղ. 3:1):

❖ **«ուրախ եղե՛ք Տիրոջով»** Սա կրկնվող թեմա է՝ ուրախանալ փրկությանը, ուրախանալ Նրանով:

❖ **«նույն բաները ձեզ գրելն ինձ համար ձանձրալի չէ, իսկ ձեզ համար ապահովություն է»** Գլխավոր ճշմարտությունները կարիք ունեն շեշտադրելու՝ ընդգծելու համար կրկնել: Պողոսը պետք է որ այս բաները նրանց ասած լինել բանավոր կերպով, երբ Փիլիպպեում էր, և հավանաբար գրել էր նրանց իր նախորդ նամակում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 3:2-6

2զուշացե՛ք շներից, զգուշացե՛ք չար մշակներից, զգուշացե՛ք թլփատության կողմնակիցներից: **3**Որովհետև թլփատությունը մենք ենք, որ Աստծուն հոգով ենք պաշտում և Քրիստոս Հիսուսով ուրախանում, և մեր վստահությունը մարմնի վրա չէ, **4**թեև ես էլ կարող էի մարմնով պարծենալ: Եթե մի ուրիշը կարծում է, թե կարող է վստահություն ունենալ մարմնի կողմից, ապա առավել ևս ես՝ **5**թլփատված ութերորդ օրը, Իսրայելի ազգից, Բենի-ամինի ազգից, եբրայեցի՝ եբրայեցիներից, Օրենքին նայելով՝ փարիսեցի: **6**Ինչ նախանձախնդրությանն է վերաբերում, եկեղեցուն էի հալածում, Օրենքով եղող արդարության դեպքում անբասիր էի:

3:2 «2զուշացե՛ք շներից» Սա «ուշադիր եղե՛ք» (*blepō*) խոսքի ներկա ներգործական հրամայականն է, որը շեշտադրության համար երեք անգամ կրկնվում է: Ռաբբիները հեթանոսներին «շներ» էին անվանում: Պողոսը փոխել է արտահայտությունը նկատի ունենալով սուտ վարդապետներին: Հկում «շներ» տերմինը վերաբերում էր՝ (1) անառակ տղամարդկանց (տես՝ 2 Օրինաց 23:18) կամ (2) չար մարդկանց (տես՝ Սաղմ. 22:16,20): Մշակությանն տեսանկյունից այս դարձվածքը վերաբերում էր արատավոր փողոցային խառնաշփոթին: Այս սուտ վարդապետները նման էին կատաղի շների և արատավոր անհավատների (տես՝ Սատթ. 7:6, Գաղ. 5:15, Հայտն. 22:15):

- | | |
|------|----------------------------------|
| NASB | «սուտ թլփատությունից» |
| NKJV | «խեղաթյուրում» |
| NRSV | «նրանք, որ խեղում են մարմինը» |
| TEV | «ովքեր ստիպում են մարմինը կտրել» |
| NJB | «անձի խեղաթյուրում» |

Սա հուդաիստների կողմից հարկադրվող թլփատությանն է վերաբերում (տես՝ Գործք 15:1,5, Գաղ. 5:2-3, 12): Նրանք հիմնականում սովորեցնում էին, որ մարդը նախքան Քրիստոսին դառնալը պետք է Հրեա դառնա: Նորադարձ Հրեա դառնալն իր մեջ ներառում էր թլփատվելը, ինքնամկրտությունը և տաճարում զոհ մատուցելը: Թլփատությունը փոխաբերություն էր Մովսիսական Օրենքի «լուծը» կրելու համար:

- | | |
|------------------|----------------------------------|
| 3:3 | |
| NASB, NKJV, NRSV | «ճշմարիտ թլփատությունը» |
| TEV | «իրական թլփատությունը» |
| NJB | «թլփատության ճշմարիտ ժողովուրդը» |

Այս հոգևոր՝ հավատքի թվատարությունը նկարագրվում է Հռոմ.2:28-29 և Գաղ.3:29-ում: Եկեղեցին ինչ որ առումով հոգևոր Իսրայելն է (տես՝ Գաղ.6:16): Հի-ում թվատարությունը Աբրահամի ուխտի նշանն էր (տես՝ Ծննդ. 17:11,14,23-25): Այն բովանդակում էր պատշաճ վերաբերմունք և ոչ միայն ֆիզիկական ծես (տես՝ Ղևտ.26:41, 2 Օրինաց 10:16 և Երեմ.4:4): Ճշմարիտ հոգևոր թվատարությունը նկարագրվում է ներկա ներգործական երեք դերբայներով՝

1. մարդիկ, որոնք երկրպագում են Աստծո Հոգով
2. մարդիկ, որոնք փառավորում են Քրիստոսին
3. մարդիկ, որոնք իրենց հույսը մարմնի վրա չեն դրել

NASB
NKJV
NRSV
TEV

«փառաբանում Հիսուս Քրիստոսով»
«Հիսուս Քրիստոսով ուրախանում»
«և պարծենում Հիսուս Քրիստոսով»
«մեր կյանքում Հիսուս Քրիստոսի հետ միաբանությամբ ուրախանում»
«մեր պարծանքը դարձնում Հիսուս Քրիստոսը»

NJB

Պողոսը հաճախ է օգտագործում այս խոսքը (տես՝ Հռոմ. 2:23, 3:27, 4:2, 5:2,3,11, 11:18, 15:17, 1 Կորնթ. 1:31, 3:21, 4:7, 5:6, 7:14, 8:24, 9:2,4,11,15,16, 10:8, 13, 15, 16, 11:10,12, 2 Կորնթ. 1:14, 5:12, 7:4, 10:17, 11:17, 18,30, 12:1, 5, 6, 9, 11, Գաղ.6:4, 13, 14, Եփես.2:9, Փիլ. 1:26, 2:16, 3:3, 2 Թեսաղ. 1:4): Ըստ համատեքստի այն թարգմանվում է «ուրախանալ», «պարծենալ», «վստահ հպարտություն» կամ «մեծարել»:

NASB
NKJV, NRSV
TEV
NJB

«վստահությունը մարմնի վրա չենք դնում»
«մարմնի վրա վստահություն չունենք»
«մենք ընդհանրապես չենք վստահում արտաքին ծեսերին»
«չենք ապավինում ֆիզիկական հատկանիշներին»

Այս տերմինը ակնարկում է ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի վրա վստահ պարծենկոտություն: Այս արտահայտությունը հակադրվում է նախորդ արտահայտությանը: Քրիստոսի հետ Պողոսի փոխհարաբերությունը և նրա ավետարանի հասկացողությունը վստահություն էր տալիս իրեն:

Սա կարող է վերաբերել Աբրահամի սերնդից լինելու հրեական հպարտությանը (տես՝ Փիլ. 3:4-5, Մատթ. 3:9, Հովհ. 8:33,37,39): Անշուշ սա վերաբերում է հրեական ծեսերին, ինչպես օրինակ թվատարությունը (տես՝ Գործք 15 և Գաղատացիներ):

3:4 «Եթե» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրում է, որ ճիշտ է հեղինակի տեսանկյունից կամ ըստ նրա գրական նպատակների:

❖ **«ես էլ կարող էի»** Պողոսը դժկամորեն համեմատում է իր հրեական արտոնությունները այն Հուդայիստների հետ: Նրանք ցեղային կամ կրոնական առումով չէին գերազանցում իրեն (տես՝ Փիլ. 3:5-6, 2 Կորնթ. 11:22): Պողոսն իրեն պաշտպանում էր, քանի որ իր վրա հարձակվելով նրանք փորձում էին վարկաբեկել ավետարանի:

3:5 «թվատված ութերորդ օրը» Հրեաները թվատվում էին ծնունդից հետո ութերորդ օրը (տես՝ Ծննդ. 17:9-14, Ղևտ.12:3): Ֆլավիոս Ջոզեֆոսն ասում է, որ արաբները թվատվում են 13 տարեկան հասակում՝ հետևելով Ծննդ. 17:23-27 խոսքին:

❖ **«Իսրայելի ազգից»** Հրեա ժողովրդի արտոնությունների ցանկի համար տե՛ս Հռոմ. 9:4-5, 11:1:

❖ «**Բենիամինի ցեղից**» Սա Իսրայելի առաջին թագավորի՝ Սավուղի ցեղն էր: Այն նաև համարվում էր հարավային թագավորության՝ Հուդայի մի մասը, այն բանից հետո երբ այս ցեղը Ք.Ա. 922թ-ին բաժանվեց:

❖ «**Եբրայեցի՝ եբրայեցիներից**» Այս դարձվածքը վերաբերում է կա՛մ (1) մաքուր գենոֆոնդին, կա՛մ էլ (2) նրա եբրայերեն (արամերեն) լեզվով խոսելուն:

3:5 «Օրենքին նայելով՝ փարիսեցի» Սա պահպանողական հայտնի մի աղանդ էր Հուդայականության ներսում, որը ձևավորվել էր Մակկաբայեցիների ժամանակներում (տես՝ Հովհ. 3:1): Նրանք ցանկանում էին պահել Մովսիսական Օրենքը ամենաչնչին մանրամասնությամբ (տես՝ Գործք 26:4-5): Նրանք ունեին մանրակրկիտ կանոններ կյանքի ցանկացած բնագավառի համար, որը զարգացել էր ռաբբիների երկու դպրոցների (Շամմայ և Հիլլել) միջև ժամանակի ընթացքում քննարկումների միջոցով: Նրանց բանավոր ավանդույթները հետագայում հավաքագրվեցին որպես Բաբելոնյան և Պաղեստինյան Թալմուդներ: Նիկողեմեսը և Հովսեփ Արիամաթացին իրենց անկեղծության և նվիրվածության դրական օրինակներ են:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐ
SPECIAL TOPIC: PHARISEES

- I. Այս տերմինը ունի հետևյալ հնարավոր ծագումներից որևէ մեկը՝
 - Ա. «Առանձին լինել» Այս խումբը ձևավորվել է Մակկաբայեցիների ժամանակաշրջանում: (Սա ամենալայն տարածում ունեցող տեսակետն է):
 - Բ. «Բաժանել» Սա եբրայերեն միևնույն արմատի մեկ այլ նշանակությունն է: Ոմանք ասում են, որ դա նշանակում էր մեկնաբան՝ բացատրող (տես՝ 2 Տիմ.2:15):
 - Գ. «Պարսիկ» Սա արամերեն միևնույն արմատի մեկ այլ նշանակությունն է: Փարիսեցիների որոշ վարդապետություններ շատ ընդհանրություններ ունեն պարսկական Չրադաշտականության դուալիզմի հետ:
- II. Նրանք ձևավորվեցին Մակկաբայեցիների Դարաշրջանում՝ *Hasidim* (կրոնավորներ) կոչվող մարդկանցից: Մի քանի տարբեր խմբեր, ինչպես Էսսենները, դուրս եկան հակահելլենական շարժումից՝ Անտիոքցի IV Էպիֆանեսի ժամանակ: Փարիսեցիների մասին առաջին անգամ նշվում է Չոզեֆոսի *Հրեաների Հնությունները* 8.5.1-3 գրքում:
- III. Նրանց հիմնական վարդապետությունները.
 - Ա. Հավատում են գալիք Մեսիային, որը միջաստվածաշնչյան հայտնության գրականության ազդեցությամբ է՝ ինչպես 1 Ենովքի գիրքը:
 - Բ. Աստված գործում է մեր ամենօրյա կյանքում: Սա ուղղակիորեն Սադուկեցիների վարդապետության հակառակն էր: Շատ փարիսեցիական վարդապետություններ հանդիսանում են Սադուկեցիների վարդապետությունների հակադրությունը:
 - Գ. Երկրավոր կյանքի հիման վրա ֆիզիկապես կողմնորոշված հանդերձյալ կյանք, որը պարունակում է վարձրատրություն և պատիժ (տես՝ Դան. 12:2):
 - Դ. ՀԿ-ի իշխանությունը և Բանավոր Ավանդույթները (Talmud): Նրանք գիտակցաբար հնազանդվում էին ՀԿ-ի Աստծո պատվիրաններին, քանի որ դրանք մեկնաբանվում և կիրառվում էին դպրոցների և ռաբբիական ուսուցիչների կողմից (Shammai – պահպանողական, և Hillel -ազատական): Ռաբբիական մեկնաբանությունները հիմնված են երկու տարբեր փիլիսոփայությունների պատկանող ռաբբիների միջև երկխոսությունների վրա, մեկը՝ պահպանողական, մյուսը՝ ազատական (լիբերալ): Այս բանավոր քննարկումները Սուրբ Գրքի խոսքերի նշանակությունների շուրջ վերջին հաշվով գրի են առնվում երկու տեսքով՝ Բաբելոնյան Թալմուդի և անավարտ Պաղեստինյան Թալմուդի: Նրանք հավատում էին, որ Մովսեսը ստացել էր այս բանավոր մեկնաբանությունները Սինա լեռան վրա: Այս քննարկումների պատմական սկիզբը դրվել է Եզրասի և «Մեծ Ժողովարանի» մարդկանց կողմից (հետագայում Սինեդրոն կոչվող):

Ե. Ուժեղ ձևավորված հրեշտակագիտությունը: Սա ներառում էր բարի և չար հոգևոր էակներին: Սա ձևավորվեց պարսկական դուալիզմից և միջաստվածաշնչյան գրականությունից:

❖ **«Ինչ նախանձախնդրությանն է վերաբերում»** Ոգևորությունը ինքնաբերաբար Աստուծուց չէ (տես՝ Հռոմ. 10:2):

❖ **«Եկեղեցուն էի հալածում»** Ըստ երևույթին նախկինում Պողոսը բանտարկել և նույնիսկ սպանել էր հավատացյալների (տես՝ Գործք 8:3, 9:1, 13, 31, 1 Կորնթ. 15:9, Գաղ. 1:13-14, 23, 1 Տիմ. 1:13): Սա ակնհայտ կերպով նկատի ունի տիեզերական Եկեղեցուն (տես՝ Մատթ. 16:18, Եփես. 1:22, 3:10,21, 5:23-32): Տես՝ Հատուկ Թեմա. Եկեղեցի (Ekklesia), Կող. 1:18-ում:

❖ **«Օրենքով եղող արդարության դեպքում անբասիր էի»** Պողոսը խոսում էր իր նախաքրիստոնեական շրջանում Մովսիսական Օրենքի հասկացողության (տես՝ Մարկ.10:20) և դրա մեկնության (Թավմուդի) վերաբերյալ: Եթե այս սուտ վարդապետները կամենում էին ուրախանալ իրենց հրեականությամբ, Պողոսը նույնպես կարող էր (տես՝ 2 Կորնթ. 11:16-23): Տես՝ Հատուկ Թեմա Եփես. 4:24-ում:

«Անբասիր» տերմինը սկզբնապես կիրառվում էր ՀԿ-ում գոհաբերվող կենդանիների համար (տես՝ Փիլ. 2:15): Սա չի նշանակում «անմեղ» (տես՝ Ծննդ. 6:9, 17, Հոբ 1:1), այլ մեկը, որ կատարում է այն ինչ հասկացել է Աստծո կամքի վերաբերյալ:

Տես՝ Հատուկ Թեմա. Անարատություն, Կող. 1:22-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 3:7-11

⁷Բայց այն, ինչ շահ էր ինձ համար, կորուստ համարեցի Քրիստոսի համար: ⁸Արդարև, ես ամեն ինչ վնաս եմ համարում իմ Տեր Քրիստոս Հիսուսին ճանաչելու գերազանցության համար, որի համար ամեն բանից զրկվեցի և դրանք աղբ եմ համարում, որ Քրիստոսին շահեմ ⁹և Նրա մեջ գտնվեմ: Ո՛չ թե իմ արդարությունն ունենալով, որ Օրենքից է, այլ այն, որ Քրիստոսի հավատից է, այն արդարությունը, որն Աստուծուց է՝ հավատով. ¹⁰որ ճանաչեմ Նրան և Նրա հարության գործությունը ու Նրա չարչարանքների հաղորդակցությունը՝ Նրա մահվան կերպարանակից լինելով, ¹¹որպեսզի մեռելների հարությանը հասնեմ:

3:7 «կորուստ համարեցի» Սա վաղակատար չեզոք (դեպոնենտ) սահմանական է: Պողոսը հանգեց այն եզրակացության, թե որքան անօգուտ ծեսեր ու կանոններ կային, որոնք ճշմարիտ արդարության հասնելու և պահպանելու միջոցներ էին դարձել (տես՝ Կող. 2:16-23): Սա հենց Պողոսի նախկին կրոնական դաստիարակության և ապրելակերպի մեծագույն աստվածաբանական ընդգծված փոփոխությունն էր, որը տեղի ունեցավ Դամասկոսի ճանապարհին իր դարձի ժամանակ (տես՝ Գործք 9:1-22, 23:3-16, 26:9-18):

3:8-11 Այս համարները հունարենում մեկ նախադասություն են:

3:8 «համարում եմ» Սա ներկա չեզոք (դեպոնենտ) սահմանական է: Փիլ. 3:7,8-ում այս տերմինը օգտագործվում է երեք անգամ: Սա բիզնես տերմին է «կորցնել» բառի համար: Նախկինում այն ամեն ինչին, որ Պողոսը արդարության համար վստահում էր (իր ցեղը, կրոնական գործերը), այժմ նա «վնաս» է համարում:

NASB, NRSV

«հանուն իմ Տեր Քրիստոս Հիսուսին ճանաչելու գերազանց արժեքի»

NKJV

«իմ Տեր Քրիստոս Հիսուսին ճանաչելու գերազանցության համար»

TEV

«հանուն շատ ավելի արժեքավորի՝ իմ Տեր Քրիստոս Հիսուսի ճանաչողության»

NJB

«իմ Տեր Քրիստոս Հիսուսին ճանաչելու գերագույն արտոնության համար»

Քրիստոնեության կորիզը Հիսուսի հետ անձնական փոխհարաբերությունն է: Եբրայերենում «ճանաչել» նշանակում է մտերմիկ անձնական փոխհարաբերություն, ոչ թե ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի մասին փաստեր (տես՝ Ծննդ. 4:1, Երեմ. 1:5):

Ավետարանը (1) անձ է, որին պետք է ընդունել, (2) բովանդակություն է, որին պետք է հավատալ, և (3) կյանք, որը պետք է ապրել: «Գերազանց արժեքի» (*hyperēchō*) համար տե՛ս Հատուկ Թեմա. Պողոսի *Huper* բաղադրյալների կիրառությունը, Եփես. 1:19-ում: Այս նույն բառը կիրառվում է Փիլ. 2:3, 3:8 և 4:7-ում:

❖ «ամեն բանից գրկվեցի» Սա անորոշ կատարյալ սահմանական եղանակ է: Հնարավոր է սա վերաբերում էր իր ընտանիքին, ժառանգությանը, կրոնական վաստակին և/կամ իր ռաբբիական դաստիարակությանը: Նախկինում իր ունեցած ամեն ինչը, որ արժեքավոր էր համարվում, հանկարծ կորցրեց իր ամբողջ արժեքը: Ամեն բան փոխվեց Դամասկոսի ճանապարհին (տես՝ Գործք 9, 22:3-16, 26:9-18):

NASB, NKJV

«համարեցի աղբ»

NRSV

«համարեցի որպես աղբ»

TEV

«այդ ամենը համարեցի պարզապես աղբ»

NJB

«և այդ բոլորին նայում եմ որպես կեղտ»

Սա բառացի «թրիք» տերմինն է կամ հավանաբար հայտնի «շներին նետվածը» արտահայտության հասկանումն է (տես՝ Փիլ. 3:2): Փոխաբերական իմաստով սա նշանակում էր «անարժեք»:

❖ «որ Քրիստոսին շահեմ» Սա անորոշ կատարյալ ներգործական ստորադասական է: Պողոսը օգտագործում է այս առևտրային տերմինը փոխաբերական իմաստով՝ «ձեռք բերել» կամ «շահել» Քրիստոսին կամ ավետարանը ինչպես Փիլ. 1:21, 3:7,8 և 1 Կորնթ. 9:19-22-ում (հինգ անգամ): Տիտոս 1:1-ում նա բառացիորեն է կիրառում այս տերմինը:

3:9 «և Նրա մեջ գտնվեմ» Սա անորոշ կատարյալ կրավորական ստորադասական է: Այն արտահայտում է Պողոսի սրտանց աղոթքը: «Նրա մեջ» կամ «Քրիստոսի մեջ» խոսքը Պողոսի ամենասիրելի քերականական կազմությունն է հավատացյալների համար (լավ օրինակի համար ուշադրություն դարձրեք Եփես. 1:3, 4, 6, 7, 9, 10 /երեք անգամ/, 12, 13 /երկու անգամ/):

❖ «ո՛չ թե իմ արդարությունն ունենալով, որ Օրենքից է» Սա կարևորագույն խնդիրն է (տես՝ Հռոմ. 3:9-18, 21-31): Ինչպե՛ս է մարդկությունը Աստծո առջև արդարանում: Գործերով, թե՞ շնորհքով: Սա մեկ անգամ և ընդմիջտ պատասխանցեղ Պողոսին Դամասկոսի ճանապարհին (տես՝ Գործք 9, 22:3-16, 26:9-18): Տե՛ս Հատուկ Թեմա Եփես. 4:24-ում:

❖ «այլ այն, որ Քրիստոսի հավատից է» Հավատքը անհատի կողմից Քրիստոսով Աստծո շնորհքի պարգևի ընդունման կերպն է՝ միջոցը (տես՝ Հռոմ. 3:24, 6:23, Եփես. 2:8-9): Հավատքը և ապաշխարությունը նոր ուխտին մարդկության տված պատասխանի երկու պարտադիր կողմերն են (տես՝ Մարկ. 1:15, Գործք 3:16, 19, 20:21):

❖ «այն արդարությունը, որ Աստծուց է՝ հավատով» Արդարությունը Աստծուց պարգև է՝ նվեր (տես՝ *dōrea* - Հռոմ. 5:15, 2 Կորնթ. 9:15, Եփես. 3:7, *dōrēma* - Հռոմ. 5:16, *dōron* - Եփես. 2:8, *charisma* - Հռոմ. 6:23): Նա միշտ նախաձեռնողն է (տես՝ Հոբ. 6:44, 65): Աստված ցանկանում է, որ բոլոր

մարդիկ փրկվեն (տես՝ Եզեկ . 18:23, 32, 1 Տիմ . 2:4, 2 Պետ . 3:9), Նա ճանապարհ է պատրաստել բոլոր մարդկանց փրկության համար: Նրանք պետք է արձագանքեն և շարունակեն պատասխանել Աստծո առաջարկին՝

1. ապաշխարությամբ
2. հավատքով
3. հնազանդությամբ
4. ծառայությամբ
5. հարատևությամբ

Տե՛ս Հատուկ Թեմա Եփես . 4:24-ում:

3:10 «Նրա հարության գործությունը» Սա պետք է, որ վերաբերի Քրիստոսի մեջ հավատացյալների նոր կյանքին: Փիլ . 3:10-ում արտահայտությունների այս շարքը արտացոլում է Պողոսի ավետարանի համար չարչարանքները (տես՝ 2 Կորնթ . 4:7-12, 16, 6:4-10, 11:23-28), որի մեջ մտնում էր նաև իր այդ պահի բանտարկությունը:

Մյուսներն Փիլ . 3:10-ի այս արտահայտությունների մեջ տեսնում են հավատացյալների գերբնական միաբանությունը Քրիստոսի հետ կամ Քրիստոսակերպության մեջ նրանց հասունությունը: Ինչպես որ Հիսուսը կատարյալ դարձավ Իր չարչարանքներով (տես՝ Եբր . 5:8), այնպես էլ հավատացյալները հասունանում են չարչարանքի միջոցով (տես՝ Հռոմ . 5:1-5):

❖ **«Նրա չարչարանքների հաղորդակցությունը»** Չարչարանքը Քրիստոնեության առաջին մի քանի դարերի ամենատարածված թեման է, ինչպես որ մեր օրերում աշխարհի շատ հասարակությունների մեջ (տես՝ Հռոմ . 8:17, 1 Թեսաղ . 3:3, 2 Տիմ . 3:12, 1 Պետ . 3:14, 4:12-19): Ինչպես որ հավատացյալները բաժնեկից են Հիսուսի հաղթանակին, այնպես էլ բաժնեկից են Նրա ծառայությանը (տես՝ Մատթ . 10:24, Ղուկ . 6:40, Հովհ . 13:14-16, 15:20, 17:18, 20:21, 2 Տիմ . 3:12): Տե՛ս Հատուկ Թեմա. *Koinōnia* Փիլ . 2:1-ում:

❖ **«Նրա մահվան կերպարանակից լինելով»** Սա ներկա կրավորական դերբայ է: Հավատացյալները պետք է մեռած լինեն մեղքի և իրենց եսի համար և կենդանի՝ Աստծո համար (տես՝ Մատթ . 16:24-26, Հռոմ . 6:1-11, Գաղ . 2:20, Կող . 3:3): Ճշմարիտ կյանքին նախորդում է հին կյանքի մահը:

3:11 Սա երրորդ կարգի պայմանական նախադասություն է, որը նշանակում է հավանական ապառնի գործողություն: Համար 11-ը պետք է մեկնաբանվի համար 10-ի հասկացողության ներքո: Այս արտահայտությունը չի արտահայտում կասկած փրկության վերաբերյալ, այլ խոնարհություն:

❖ **«որպեսզի հասնեն»** Այստեղ դարձյալ Պողոսի աստվածաբանությանը հատուկ բարբառային կամ պարադոքսալ օրինակ է տրված: Պողոսը գիտեր, որ ինքը Քրիստոնյա է և ինչպես որ Քրիստոսը հարություն առավ Հոգով, այնպես էլ ինքն է հարություն առնելու (տես՝ Հռոմ . 8:9-11): Սակայն Պողոսը փրկությունը տեսնում էր ոչ միայն որպես անցյալում ավարտված դեպք (տես՝ Գործք 15:11, Հռոմ . 8:24, 2 Տիմ . 1:9, Տիտոս 3:5), այլ նաև շարունակվող գործընթաց (տես՝ 1 Կորնթ . 1:18, 15:2, 2 Կորնթ . 2:15) և ի վերջո ապագայում ավարտուն վիճակ (տես՝ Հռոմ . 5:9, 10, 10:9, 1 Կորնթ . 3:15, Փիլ . 1:28, 1 Թեսաղ . 5:8-9, Եբր . 1:14, 9:28): Քրիստոնեությունը ընկած է Աստծո բնավորության և Քրիստոսով Նրա պարզևի, և Աստծուն մատուցած երախտապարտ, աշխույժ, հաստատուն, եռանդուն կյանքի հիման վրա (տես՝ Եփես . 2:8-9 և 10): Ջորջ Ի. Լեդդիի *Նոր Կտակարանի Աստվածաբանություն*, էջ՝ 521-522 (George E. Ladd's *A Theology of the New Testament*) կա այս թեմայի շուրջ մի հետաքրքիր քննարկում:

❖ **«հարություն»** Սա անսովոր բաղադրյալ տերմին է: ՆԿ-ում այն միայն այստեղ է գտնվում: Սա բառացի նշանակում է «մահվանից այն կողմ դեպի հարուցյալ *կյանք*»: Պողոսը քննարկում էր իր և Հարուցյալ Քրիստոսի միջև մտերմիկ անձնակ փոխհարաբերությունը: Նա փափագում էր վերջին

Ժամանակի օրվան, երբ նա նույնպես վերապրելու է ֆիզիկական հարությունը, քանի որ արդեն իսկ վերապրել էր հոգևոր հարությունը (տես՝ Հռոմ. 6:4-11, 2 Կորնթ. 5:17, 1 Հովհ. 3:2): Սա Աստծո Արքայության «արդեն բայց դեռ ոչ հիմա» լարվածության մի մասն է կազմում, երբ հրեական երկու դարաշրջանները հանդիպում են իրար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 3:12-16

¹²Ոչ թե արդեն հասել եմ, ոչ էլ արդեն կատարյալ եմ, այլ հետամուտ եմ, որ ձեռք բերեմ այն, ինչի համար Քրիստոս Հիսուսի կողմից ներգրավվեցի: ¹³Եղբայներ, ես չեմ համարում, թե արդեն հասել եմ, բայց այս մի բանն անում եմ, որ ետևում մնացածները մոռացած՝ առջևում եղածներին եմ ձգտում: ¹⁴Դեպի նպատակակետն եմ վազում՝ Հիսուս Քրիստոսով Աստծո բարձր կոչման մրցանակի համար: ¹⁵Եկե՛ք մենք էլ, որ կատարյալ ենք ուզում լինել, այսպես մտածենք, և եթե որևէ բանում այլ ձևով մտածեք, Աստված դա էլ ձեզ կհայտնի: ¹⁶Միայն թե, ինչի որ արդեն հասել ենք, նույն կանոնի համաձայն քայլենք և նույն միտքը ունենանք:

3:12 «Ոչ թե արդեն հասել եմ» Պողոսը ապրում էր ներկայի, բայց դեռևս անավարտ Աստծո Թագավորության լարվածության մեջ: Նա ճանաչում էր Քրիստոսին, գիտեր, թե ով է Քրիստոսի մեջ, գիտեր, որ ընդունվել է Քրիստոսի կողմից, սակայն պայքարում էր Քրիստոսանման կյանքով ապրելու համար (տես՝ Հռոմեացիների 7): Պողոսը ժամանել էր, սակայն լրիվ տեղ չէր հասել, նա կատարյալ էր, բայց լիարժեք կատարյալ չէր:

Որոշ հնագույն հունարեն ձեռագրեր՝ P⁴⁶, D* և G, ավելացնում են «կամ արդար եմ եղել»: Այս հավելումը նաև կարելի է գտնել այն հունարեն տեքստերում, որոնք օգտագործել է Իրենեոսը և Ամբրոսիաստերը: Այնուհանդերձ ավելի կարճ տեքստը պաշտպանվում է MSS P⁶¹, Ռ, A, B, D^c, K և P կողմից, ինչպես նաև հնագույն Վուլգատտա, Սիրիակ, և Կոպտիկ թարգմանությունների կողմից:

**NASB, TEV
NKJV
NRSV
NJB**

**«ոչ էլ արդեն կատարյալ եմ դարձել»
«ոչ էլ արդեն կատարյալ եմ»
«կամ արդեն հասել եմ նպատակին»
«ոչ էլ հասել եմ իմ նպատակին»**

Սա վաղակատար կրավորական սահմանական է, որը արտահայտում է անցյալում կատարված ինչ-որ բան, որն արդեն դարձել է մնայուն վիճակ և որը իրականացվել է Աստծո կողմից: Տերմինն ինքնին նշանակում է՝

1. Լիարժեք զարգացած
2. լիարժեք սպառազինված
3. կատարյալ
4. հասուն
5. պատշաճ

Այն չի արտահայտում անգլերեն լեզվի կատարելության կամ անմեղության իմաստը:

❖ **«հետամուտ եմ»** Սա ներկա ներգործական սահմանական է: Սա ի սկզբանե որսորդական տերմին է եղել, որը նշանակում էր «կենդանուն հետևել՝ հետամուտ լինել»: Այն սկսեց փոխաբերական իմաստով կիրառվել վազքի մրցույթի համար: Պողոսը հետամուտ չէր փրկության (տես՝ Հռոմ . 9:30), այլ հասունության, Քրիստոսակերպության (տես՝ Հռոմ . 6:4-9):

**NASB
NKJV
NRSV**

**«որպեզի ձեռք բերեմ այն, ինչի համար էլ Քրիստոս Հիսուսի կողմից ներգրավվեցի»
«որ ձեռք բերեմ այն, ինչի համար Քրիստոս Հիսուսի կողմից ձեռք բերվեցի»
«իմ սեփականը դարձնեմ, քանի որ Քրիստոս Հիսուսն էլ ինձ Իր սեփականը դարձրեց»**

TEV

«մրցանակը շահեմ, որի համար Քրիստոս Հիսուսն արդեն ինձ շահել է իր համար»

NJB

«փորձելով մրցանակն ամուր բռնել, որի համար Քրիստոս Հիսուսն էլ ինձ ամուր բռնեց»

Այս բաժինը սկսվում է երրորդ կարգի պայմանական նախադասությամբ (*ean* –ի փոխարեն կիրառելով *ei*), որը նշանակում է հավանական ապառնի գործողություն (տես՝ Փիլ. 3:11): Այն կարող է վերաբերել (1) փրկությանը (Փիլ. 3:9), (2) Քրիստոսակերպությանը (Փիլ. 3:10), կամ (3) հարությանը (Փիլ. 3:11):

Սա հզոր հունարեն բառ է: Պողոսին Քրիստոսը «խլել» էր Դամասկոսի ճանապարհին (տես՝ Գործք 9:1-22, 22:3-16, 26:9-18): Այն Մեկը, որի հետևորդներին նա հավածում էր, այժմ հակառակվում էր իրեն որպես հարուցյալ Տեր: Աստվածաբանությունը և անձնական փորձառությունը միաձուլվեցին: Այժմ Պողոսը փորձում էր լինել այդ մարդկանց և Նրա պես, որի վրա նա մի ժամանակ հարձակվում էր:

3:13 «ես չեմ համարում, թե արդեն /դեռ/ հասել եմ» Սա վաղակատար ներգործական անորոշ է: Այս տերմինը Փիլ. 3:12-13-ում օգտագործվում է երեք անգամ: Պողոսը պայքարում էր Քրիստոսի մեջ հասունանալու համար, սակայն գիտեր, որ դեռ չէր հասել Քրիստոսի հասունությանը (տես՝ Հռոմեացիների 7): Ամեն դեպքում ավետարանի ամենահրաշալի ճշմարտությունն այն է, որ Քրիստոսում նա (և բոլոր հավատացյալները) արդեն իսկ կատարյալ էր (արդարացած և սրբացված, տես՝ Հռոմ. 8:29-30):

«Համարել», «վերագրել» կամ «հաշվել» (տես՝ Հռոմ. 4:3, 6:11, 1 Կորնթ. 13:5) բոլորն էլ վերաբերում են մտավոր հաստատմանը, որի միջոցով մեղավոր՝ ընկած մարդկությունը հասկանում է ավետարանը և ընտրում ապրել դրա նոր ճշմարտության և Քրիստոսի աշխարհայացքի լույսի ներքո:

Այս նախադասության մեջ ձեռագրային մի տարբերակ կա «դեռ» խոսքը ի հակադրություն «չեմ» խոսքի: Հնագույն տեքստերը բաժանվում են այս երկու տարբերակների միջև: Լավագույն բացատրությունն այն է, որ դպիրները փոխել են Պողոսի «չեմ» խոսքը «դեռ չեմ» խոսքի հետ, քանի որ միգուցե մտածել են, որ նա /Պողոսը/ չափազանց համեստ էր: Ինչպես և շատ ձեռագրային տարբերությունների դեպքում, սա շատ փոքր ազդեցություն է թողնում մեկնաբանության վրա:

❖ **«ետևում մնացածները մոռացած»** Սա ներկա չեզոք (դեպոնենտ) դերբայ է: Պողոսը հոգևոր նոր սկիզբ դրեց: Նա թողեց իր հրեական անցյալը: Մակայն, քանի որ այս արտահայտությունը ներկա ժամանակով է, այն կարող է բովանդակել իր Առաքելական գործը կամ ներկայացնել բանտարկությունը: Աստծո առջև իր հոգևոր դիրքը հիմնված չէր մարդկային գործերի, անցյալի կամ ներկայի վրա:

❖ **«առջևում եղածներին եմ ձգտում»** Սա ևս մեկ ներկա չեզոք (դեպոնենտ) դերբայ է: Սա առաջինն է մի շարք մարզական տերմիններից: Այն նշանակում էր «վագորդ, որը նկրտում է նպատակին»: Սա ուժգնացված բաղադրյալ է՝ երկու նախդիրներով *epi* և *ek*: Պողոսը ակտիվ գոհունակ կյանք էր վարում: Իր փրկվելուց հետո իր ակտիվության մակարդակը մնաց բարձր, սակայն շարժառիթը արմատապես փոխվեց անձնական ջանքեր գործադրելուց դեպի ավետարանի ծառայության:

3:14 Սա մարզական փոխաբերությունների շարք է: Դրանք մեզ ցույց են տալիս Քրիստոնեական կյանքի համար մեզ անհրաժեշտ ջանասիրությունը (տես՝ 1 Կորնթ. 9:24,27, Եբր. 12:1):

❖ **«Աստծո բարձր կոչմանը»** Տե՛ս Հատուկ Թեմա . Կանչված, Եփես. 4:1-ում:

3:15 «որ կատարյալ ենք» Սա Փիլ. 3:12-ում նշված նույն «կատարյալ» տերմինն է, սակայն Պողոսն այն կիրառում է երկու տարբեր նշանակությամբ: Քրիստոնյաները կարող են հասուն լինել առանց անմեղ լինելու (տես՝ 1 Կորնթ. 2:6, 14:20, Եփես. 4:13, Եբր. 5:14, 6:1):

❖ **«այսպես մտածենք»** Պողոսը հաճախ է դիմում մտավոր գործընթացների: Նա կիրառում է մտորելու կամ տրամաբանելու համար հունարեն մի քանի բառեր: Սա *“phroneō”* (տես՝ Փիլ. 1:7, 3:15,19), *“ginosko”* (տես՝ Փիլ. 1:12), *“psuchē”* (տես՝ Փիլ. 1:27), *“noēma”* (տես՝ Փիլ. 4:7), *“logizomai”* (տես՝ Փիլ. 4:9), *“manthano”* (տես՝ Փիլ. 4:9, 11) տերմինների ներկա ներգործական ստորադասական է: Հավատացյալները պետք է երկրպագեն Աստծուն իրենց մտքերով (տես՝ 2 Օրինաց 6:23, մեջբերված է Մատթ. 22:36-38, Մարկ. 12:29-34, Ղուկ. 10:27-28-ում): Ճշմարիտ Քրիստոնեությունը չի կարող լինել հակաինտելեկտուալ: Սակայն, մենք չպետք է վստահենք մեր մեղավոր մարդկային մտածողությանը, այլ Աստծո ինքնաբացահայտմանը (Մուրր Գրքին):

❖ **«եթե»** Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրում է, որ ճիշտ է հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար: Համայնքում կային մարդիկ, ովքեր իրոք ունեին «տարբեր վերաբերմունք»:

❖ **«Աստված դա էլ ձեզ կհայտնի»** Հավատացյալների մեջ անհամաձայնություն կա հավատքի շատ առանձնահատկությունների շուրջ: Պողոսը վստահ զգում էր, որ նոր ուխտը, որը բովանդակում էր Հոգու ներբնակություն, նոր սիրտ, և նոր միտք, ի վերջո բոլոր հավատացյալներին ներփոխելու և բարեփոխելու է (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:26-27, Հովհ. 6:45, Եփես. 1:17, 1 Թեսաղ. 4:9, 1 Հովհ. 2:27):

Համատեքստում այս արտահայտությունը հայտնում է Պողոսի ուղերձի լիազորության վերաբերյալ հենց իր ունեցած տեսակետը: Նա զգում էր, որ Մուրր Հոգով էր առաջնորդվում (տես՝ 1 Կորնթ. 2:10, 7:10-12, 11:23, 14:37-38, 2 Կորնթ. 10:8, 12:1, Գաղ. 1:12,16, 2:2, 2 Թեսաղ. 3:14): Սա իր առաքելական լիազորության զգացողության արտահայտման մեկ այլ կերպ էր:

Սա հնարավոր է մեկնաբանել երկու կերպ՝ (1) Աստված կհայտնի Իր ճշմարտությունը սխալ հավատացյալներին կամ (2) Աստված կհայտնի այն հավատացյալներին, ովքեր սխալ են իրենց վարդապետության կամ գործերի մեջ: Համատեքստում կարծես թե #2-ը լավագույնս է համապատասխանում:

3:16
NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«սակայն շարունակենք ապրել նույն չափանիշով, որին հասել ենք»
«Միայն թե, ինչի որ արդեն հասել ենք, նույն կանոնի համաձայն քայլենք և նո՛ւյն միտքը ունենանք»
«Միայն թե եկեք ամուր պահենք այն, ինչին հասել ենք»
«ինչպես էլ որ լինի, եկեք առաջ շարժվենք ըստ այն նույն կանոնների, որոնց հետևել ենք մինչ այժմ»
«Միևնուն ժամանակ, եկեք առաջ գնանք այն կետից, որին յուրաքանչյուրս հասել ենք»

Այս համարով Պողոսը հորդորում է շարունակել ապրել որպես Քրիստոնյաներ (տես՝ Եփես. 4:1,17, 5:2, 15): Հավատացյալները արդարանում և սրբազորվում են Քրիստոսի վրա հավատքի միջոցով, որն Աստծո պարգևն է, սակայն նրանք պետք է շարունակեն պայքարել Քրիստոսակերպ հատունության հասնելու համար (տես՝ 2 Կորնթ. 3:18):

Հնագույն հունարեն ձեռագրերում գոյություն ունեն մի շարք հավելումներ այս համարին: Ամենաուժեղ տեքստը (NASB և NRSV) գտնվում է հունարեն P¹⁶, P⁴⁶, 8*, A, B ձեռագրերում: UBS⁴-ը այս ավելի կարճ տեքստը գնահատում է «A» (հաստատ): Տեքստուս Ռիսեպտուսը ավելացնում է «եկեք լինենք նույն մտքով» (NKJV), որը գտնվում է MSS 8*, K և P ձեռագրերում: Մի քանի այլ հավելումներ կան, որոնք կարծես թե ցույց են տալիս այս համարի վրա ավելացնելու և խմբագրելու դպրական հակվածությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 3:17-4:1

¹⁷Եղբայրներ, իմ հետևորդները եղեք, և նկատի առեք նրանց, ովքեր մեր ձեզ տված օրի—
նակով են քայլում:¹⁸(Որովհետև շատերը, որոնց մասին հաճախ ասել եմ ձեզ և հիմա էլ լալով
եմ ասում, որպես Քրիստոսի խաչի թշնամիներ են քայլում,¹⁹նրանց վերջը կորուստ է, նրանց
աստվածը իրենց որովայնն է, իսկ փառքը՝ իրենց ամոթը, որոնք երկրավոր բաներ են
մտածում):²⁰Բայց մեր քաղաքացիությունը երկնքում է, որտեղից սպասում ենք Փրկչին՝ Տեր
Հիսուս Քրիստոսին .²¹Որ պիտի նորոգի մեր խոնարհ մարմինը, որպեսզի այն կերպարա-
նակից լինի Իր փառավոր մարմնին, այն գործությամբ, որ կարող է ամեն բան հնազանդեցնել
Իրեն: ^{4:1}Ուստի, իմ շատ սիրելի և կարոտալի եղբայրներ, իմ ուրախությունն ու պսակը,
այսպես հաստատո՛ւն մնացեք Տիրոջով, սիրելիներս:

3:17 «Իմ հետևորդները եղեք /անգլ՝ Միացեք, իմ օրինակին հետևելու/» Այս համարն ունի ներկա
ժամանակի երկու հրամայականներ: Պողոսը քաջալերում է նրանց, որպեսզի հետևեն իրեն, ինչպես
որ ինքն էլ հետևում էր Քրիստոսին (տես՝ Փիլ. 4:9, 1 Կորնթ. 4:16, 11:1, 1 թեսաղ. 1:6, 2 Թեսաղ. 3:7,
9): Այս արտահայտությունը տրամաբանորեն կապված է Փիլ. 3:15-16-ի հետ: Ուշադրություն
դարձրեք, թե ինչպես է Պողոսի օրինակը ընդարձակվում՝ ներառելով իր միսիոներական թիմին և
հավանաբար Եպափրոդիտոսին («իմ» - «մեզ»):

❖ «Օրինակ» Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉԵՎԱԶԱՓ (TUPOS)

SPECIAL TOPIC: FORM (TUPOS)

Tupos տերմինն ունի լայն կիրառություն՝

1. Մուլթոն և Միլիգան, *Հունարեն Նոր Կտակարանի Բառարան*, էջ՝ 645 (Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*)
ա. նմուշ
բ. ծրագիր
գ. գրելաճ կամ գրելաձև
դ. որոշում կամ հրաման
ե. դատավճիռ կամ վճիռ
զ. մարդկային մարմնի նմուշը՝ մոդելը, որպես ընտիր գոհ նվիրված բժշկող աստծուն
է. ԲԱՅ, որը գործածվում է օրենքի հրամանները ստիպելու իմաստով
2. Լու և Նիդա, *Հունարեն-անգլերեն բառարան* (Louw and Nida, *Greek-English Lexicon*, հատոր
2, էջ՝ 249)
ա. սպի (տես՝ Հովհ. 20:25)
բ. պատկեր (տես՝ Գործք 7:43)
գ. մոդել՝ նմուշ (տես՝ Եբր. 8:5)
դ. օրինակ (տես՝ 1 Կորնթ. 10:6; Փիլ. 3:17)
ե. նախատիպ (տես՝ Հռոմ. 5:14)
զ. տեսակ (տես՝ Գործք 23:25)
է. բովանդակություն՝ նամակ (տես՝ Գործք 23:25)
3. Հարոլդ Բ. Մուլթոն, *Վերլուծական Վերանայված Հունարեն Բառարան* (Harold K. Moulton, *The Analytical Greek Lexicon Revised*, էջ՝ 411)
ա. ինքնագովում, տպավորություն, նշան (տես՝ Հովհ. 20:25)
բ. սահմանափակում
գ. պատկեր (տես՝ Գործք 7:43)
դ. բանաձև, սխեմա (տես՝ Հռոմ. 6:17)
ե. տեսք, բովանդակություն (տես՝ Գործք 23:25)
զ. ձև, կրկնօրինակ (տես՝ 1 Կորնթ. 10:6)
է. կանխատեսելի ձև, տեսակ (տես՝ Հռոմ. 5:14, 1 Կորնթ. 10:11)

ը. օրինաչափություն (տես՝ Գործք 7:44, Եբր.8:5)

թ. բարոյական չափանիշ (տես՝ Փիլ.3:17, 1 Թեսաղ.1:7, 2 Թեսաղ.3:9, 1 Տիմ.4:12, 1 Պետ.5:3)

Այս համատեքստում #1-ը կարծես թե լավագույն տարբերակն է: Ավետարանը առնչվում է թե՛ վարդապետության և թե՛ ապրելակերպի հետ: Քրիստոսի մեջ փրկության ճիշտ պարզևը նույնպես պահանջում է Քրիստոսանման կյանք:

3:18 «որովհետև շատերը, որոնց մասին հաճախ ասել են ձեզ» Եկեղեցում միշտ էլ եղել են ու կլինեն սուտ վարդապետներ: Այս գրքում նրանք կարող էին լինել կա՛մ Հուդաիստներ (տես՝ Փիլ. 3:2-16), ինչպես որ Գաղատացիների գրքում և Գործք 15-ում է, կա՛մ էլ՝ Գնոստիկներ (տես՝ 1 Հովհ. 2:18, 22, 4:1-6): Միակ կերպը, որով մարդը կարող է պաշտպանվել սխալներից՝ ճշմարտությունը իմանալն է, ընդունելը և ապրելը: Սուտ վարդապետները սրամիտ, տրամաբանող, պարզ և հրապուրիչ մարդիկ էին: Վստահե՛ք Ուրդուն, հետևե՛ք Գրքին, հնազանդե՛ք Հոգուն:

❖ **«նույնիսկ լալով»** Այս տերմինը խորը վշտի համար է (տես՝ Մատթ. 2:18, 26:75, Մարկ. 5:38-39, Հովհ. 11:31, Հակ. 4:9, 5:1): Պողոսը չէր ուրախանում այն մարդկանցով, ովքեր բարոյական կամ աստվածաբանական սխալների մեջ էին:

❖ **«Քրիստոսի խաչի թշնամիներ»** Այս «խաչի թշնամիների» ինքնության վերաբերյալ անորոշություն կա: Պողոսի կողմից կիրառված արտահայտությունները այնքան ուժեղ են, որ կարծես թե վերաբերում են Փիլ. 3:2-16-ի անհավատ սուտ վարդապետներին: Փիլ. 3:19-ում թվարկված մեղքերը չեն համապատասխանում օրինապահ հրեաներին, այլ հույն հակառակորդ սուտ վարդապետներին կամ հավանական է Քրիստոնյա նորադարձներին, որոնք վերադարձել էին իրենց նախկին հեթանոս ապրելակերպին (տես՝ Կող. 2:16-23, 2 Պետ. 2:20-22): Համատեքստը նախընտրում է վերջին տարբերակը: Սակայն եթե այդպես է, Փիլ. 3:20-ի հակադրությունից կարելի է ենթադրել, որ Պողոսը կարծում էր, որ նրանք իրականում փրկված չէին (տես՝ Մատթ. 7:13, 1 Հովհ. 2:19, 2 Պետ. 2:1-22, Հայտն. 2:4-5, 10-11, 16-17, 25-26, 3:2, 5, 11, 21):

Չգույշ եղեք, որ ձեր համակարգված (հարանվանական, փորձառական, մշակութային) աստվածաբանությունը չմեկնի այս տեքստը: Գրական համատեքստը և հեղինակի բնագրային մտադրությունը պետք է լինեն գլխավոր չափանիշները: ՆԿ-ը ճշմարտության համակարգված ներկայացում չէ, այլ արևելյան, հակասական ժանր: ՆԿ-ը պարբերաբար ներկայացնում է ճշմարտություններ, որոնք թվացյալ հակասական զույգերով են (պարադոքս): Քրիստոնեական կյանքը վստահության և հույսի, ինչպես նաև պատասխանատվության և զգուշության լարվածություններով լի կյանք է: Փրկությունը արդյունք չէ, այլ նոր կյանք:

3:19

NASB, NKJV, NRSV

TEV

NJB

«որոնց վերջը կորուստ է»

«նրանք ավարտելու են դժոխքում»

«նրանք նախասահմանված են կորստյան»

Սրանք անկեղծ, տեղեկացված, կրոնավոր մարդիկ էին: Պողոսն օգտագործում է այս *apōleia* տերմինը՝ նկարագրելու Աստծո վերջնական դատաստանը (տես՝ Փիլ. 1:28, Հռոմ. 9:22, 2 Թեսաղ. 2:3, 1 Տիմ. 6:9): Սակայն պետք է ընդունել, որ Ավետարաններում այն կիրառվում է «վատնում» իմաստով (տես՝ Մատթ. 26:8, Մարկ. 14:4): Հետևաբար անհնար է իմանալ, թե Պողոսն ում մասին է խոսում (հավատացյալների, թե՛ անհավատների):

NASB

NKJV, NRSV

TEV

NJB

«որոնց աստվածն իրենց ախորժակն է»

«որոնց աստվածն իրենց որովայնն է»

«քանի որ նրանց աստվածն իրենց մարմնավոր ցանկություններն են»

«նրանց աստվածն իրենց ստամոքսն է»

Սա ցույց է տալիս նրանց հակվածությունը դեպի (1) հականոմիկ գործերը կամ (2) որկրամոլությունը և նյութապաշտությունը: Սա կարծես թե ավելի շուտ նկարագրում է հույն սուտ վարդապետներին (տես՝ Հռոմ.16:17-18) քան հրեա օրինապաշտներին (տես՝ Փիլ.3:2-6): TEV հնարավոր է որսացել է փոխաբերական իմաստը՝ «քանի որ նրանց աստվածը իրենց մարմնավոր ցանկություններն են»:

❖ **«Իսկ փառքը՝ իրենց ամոթը»** Սա կարող է վերաբերել՝

1. Հուդաիստների կողմից թափառության կամ հրեական հպարտության շեշտադրությանը
2. գիտության վրա Գնոստիկների շեշտադրությանը
3. Ազատամիտների անբարո սպրեյակերային

Այս սուտ վարդապետները հպարտանում էին հենց այն բաներով, որոնց համար իրականում պետք է ամոթ զգային: ՆԿ-ի սուտ վարդապետները հաճախ բնորոշվում են ֆինանսական և/կամ սեռական չարաշահմամբ:

❖ **«որոնք երկրավոր բաներ են մտածում»** Սա ցույց է տալիս մարդկության մեծ մասի կրոնավորության ծագումը (տես՝ Եսայի 29:13, Կող.2:16-23, 3:1-2):

3:20

NASB, NKJV

NRSV

TEV

NJB

«Քանի որ մեր քաղաքացիությունը երկնքում է»

«Բայց մեր քաղաքացիությունը երկնքում է»

«Մենք, սակայն, երկնքի քաղաքացիներ ենք»

«Բայց մեր հայրենիքը երկնքում է»

Այս համարը Փիլ.3:18-19-ի հակադրությունն է: «Մեր» դերանունը ընդգծված է: «Երկինքը» հոգնակի է (տես՝ 2 Կորնթ. 12:2, Եփես. 4:10, Եբր. 4:14, 7:26), որը հետևում է եբրայերենի կիրառությանը (*shamayim*): Հավանաբար Պողոսը որպես օրինակ օգտագործում էր այս քաղաքի հռոմեական գաղութային կարգավիճակը (տես՝ Փիլ. 1:27):

❖ **«որտեղից /անհամբեր/ սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին»** Պողոսը հաճախ է օգտագործում այս տերմինը՝ «անհամբեր սպասել», կապված Երկրորդ Գալստյան հետ (տես՝ Հռոմ. 8:19,23,25, 1 Կորնթ. 1:7, Գաղ.5:5, Եբր.9:28): Հավատացյալների Երկրորդ Գալստյան փափագը Քրիստոսի հետ իրենց փոխհարաբերության ապացույցներից մեկն է և Քրիստոսի պես ապրելու համար խթան (տես՝ Հռոմ. 8:19, 1 Կորնթ. 1:7):

Տիրոջ վերադարձի վրա Պողոսի դրած շեշտադրությունը կրկնվող է, սակայն ժամանակի գործոնի վերաբերյալ նրա հասկացողությունը անորոշ է: Մի քանի հատվածներ կան, որտեղ Պողոսը իրեն ներառում է այն խմբի մեջ, որոնք ողջ են լինելու Երկրորդ Գալստյան ժամանակ (տես՝ 1 Կորնթ. 15:51-52, 2 Կորնթացիների 5, Փիլ.3:20, 1 Թեսաղ.4:15,17): Սակայն կան այլ հատվածներ էլ, որտեղ նա պնդում է ապագա մի վերադարձ, որը իր կյանքից հետո շատ ավելի ուշ է լինելու (տես՝ 1 Կորնթ. 6:14, 2 Կորնթ. 4:14 և հատկապես 2 Թեսաղոնիկեցիներին): Հնարավոր է, որ առաջին խմբի տեքստերի «մենք»-ը գրական արտահայտման կերպ է, կամ էլ Պողոսի տեսակետներն այս թեմայի շուրջ հետազայում զարգացան: Դժվար է պատկերացնել, որ ներշնչված հեղինակը «զարգացնի» իր աստվածաբանությունը: Ավելի լավ մոտեցումն է բարբառային օրինակի հիմնավորումը: Պողոսը, ինչպես և ՆԿ-յան բոլոր հեղինակները, պնդում էին Երկրորդ Գալստյան որոշակիության և «շուտովի» գաղափարը: Հավատացյալները պետք է ապրեն Տիրոջ որևէ պահին վերադառնալու ակնկալությամբ: Սակայն Հիսուսը (Մատթեոս 24) և Պողոսը (2 Թեսաղոնիկեցիների 2) խոսում էին պատմական իրադարձությունների մասին, որոնք պետք է տեղի ունենան Երկրորդ Գալստից առաջ: Երկուսն էլ ինչևէ ճիշտ են: Հիսուսի վերադարձը մոտիվացնող հույս է հավատացյալների բոլոր սերունդների համար, սակայն իրողությունը միայն մեկ սերնդի համար է:

Սա Պողոսի կողմից երկու անգամ Հիսուսին «Փրկիչ» անվանելու տեղերից մեկն է (տես՝ Եփես. 5:23) նախքան Հովվական Թղթերը (1 Տիմոթեոս, 2 Տիմոթեոս, Տիտոս), որտեղ նա այս տիտղոսը կիրառում է տասն անգամ: Այս տերմինը սկսել է դառնալ որպես տիտղոս Հռոմեացի Կայսրի համար: Տիտոսում այս տերմինի կիրառության մեջ գոյություն ունի Հայր Աստծո և Հիսուս Որդու միջև գուգահեռ (տես՝ Փիլ. 1:3 ի դեմս 1:4-ի. 2:10-ը ի դեմս 2:13-ի, և 3:4-ը ի դեմս 3:6-ի): Առաջին Քրիստոնյաները ավելի հոժար էին առերեսվել մահվան հետ, քան այս տիտղոսը զիջել Կայսրին: Թե՛ «Փրկիչ», և թե՛ «Տեր» բառերը Կայսերական հռոմեական տիտղոսներ էին, որոնք կիրառվում էին Քրիստոնյաների կողմից բացառապես Հիսուսի համար:

3:21 «Որ պիտի նորոգի մեր խոնարհ մարմինը, որպեսզի այն կերպարանակից լինի Իր փառավոր մարմնին» Պողոսը դրական է շեշտադրում հավատացյալների մարմնավոր գոյությունը (տես՝ 2 Կորնթ. 5:1-10), թե՛ այստեղ և թե՛ երկնքում: Աստվածաբանորեն սա վերաբերում է փառավորմանը (տես՝ Հռոմ. 8:30, 1 Հովհ. 3:2), երբ փրկությունը կհասնի իր վախճանին և կատարելապես կիրականանա: Մեր հողեղեն մարմինը (տես՝ Սաղմ. 103:14) կփոխակերպվի և վերստեղծվի (1 Թեսաղ. 4:13-18) Հիսուսի հոգևոր մարմնի պես մի մարմնի (տես՝ 1 Կորնթ. 15:45, 1 Հովհ. 3:2):

❖ **«որ կարող է ամեն բան հնազանդեցնել Իրեն»** Հարուցյալ Քրիստոսը բոլորի Տերն է (տես՝ 1 Կորնթ. 15:24-28, Կող. 1:20):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞ւմ նկատի ունի Պողոսը Փիլ. 3:2-ում:
2. Ինչո՞ւ է Պողոսը թվարկում իր հրեական առավելությունները:
3. Փիլ. 3:10-ը գործնականում ինչպե՞ս է առնչվում հավատացյալների հետ:
4. Փրկվա՞ծ էին արդյոք այդ սուտ վարդապետները փրկվա՞ծ էին: